ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՓՈՂ ՎՈՃԵՐ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՓՈՂ ՎՈՇԵՐ

The Gospel of Jesus Christ, Paul Washer, Armenian
© 2016 by Paul Washer

Հիսուս Քրիստոսի Ավետարանը, Փոլ Վոշեր, հայերենով
© 2022, թարգմանված է անգլերենից

Հեղինակային իրավունքները պատկանում են
«2016 Paul Washer»-ին
Հրատարակված է ԱՄՆ-ում՝
16 17 18 19 20 21/10 9 8 7 6 5 4 3 2 1

«Reformation Heritage Books»
Լեոնարդ, Նեբրասկա 2965
Գրենդ Ռեփիդս, Միչիգան 49525
616-977-0889 / ֆաքս՝ 616-285-3246
orders@heritagebooks.org www.heritagebooks.org

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող օգտագործվել կամ կրկնօրինակվել որևէ կերպ՝ առանց գրավոր թույլտվության:
Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, եթե չկան այլ նշումներ:

Հիսուս Քրիստոսի Ավետարանը

Քրիստոնեության կենտրոնական ուղերձը Հիսուս Քրիստոսի Ավետարանն է: *«Ավետարան»* բառը նշանակում է «բարի լուր»: Քրիստոնեությունը տալիս է բոլոր ժամանակների ամենալավ լուրը: Իրականում, այն առաջարկում է մեր ամենաճնշող ճգնաժամերի միակ լուծումը: Ոչ մի կրթական համակարգ, քաղաքական կուսակցություն կամ հոգեբանական թերապիա չի կարող լուծում տալ մարդկության ամենախորը խնդրին: Չնայած այն բանին, որ մարդկային իմաստությունը բազմաքանակ, ժամանակավոր օգուտներ է տվել՝ պատմությունը ցույց է տվել, թե որքան սնանկ ենք մենք լուծելու մեղավորության և համատարած ապականության հարցը, որոնց ծանրության տակ հառաչում է մեր աշխարհը:

Ավետարանը հայտնում է, որ Աստված եկել և հաղթանակ է տարել մեզ համար: Սա բարի լուր է հենց այն պատճառով, որ պայմանավորված չէ նրանով, ինչ մենք ենք արել կամ կարող ենք անել, այլ՝ ինչ Աստված է արել և կանի Իր ժողովրդի փոխարեն: Ավետարանը պատմում է Աստծո միջամտության մասին այս հուսահատ աշխարհի ընթացքին:

Ավետարանը հռչակում է Հիսուս Քրիստոսի գալստյան բարի լուրը: Շուրջ երկու հազար տարի առաջ՝ Հռոմեական կայսրության վերելքի ժամանակ, Աստված Իր Որդուն ուղարկեց մարդկության պատմության մեջ՝ ազգություններին փրկելու մեղքերից և թշվառությունից: Քրիստոսը Աստծո Հոգուց բեղմնավորվեց կույսի արգանդում, և ծնվեց Հիսուս Նազովրեցին՝ Աստված-Մարդը:

Հիսուսը եկավ կրելու ընկած մարդկանց մեղքերը և զոհաբերելու Իր կյանքը մեր փոխարեն: Նրա մահով բավարարվեցին Աստծո արդարության պահանջմունքները մեղավորներից և հնարավոր դարձավ ստանալ արդար Աստծո ներումը: Երեք օր անց Նրա հարությունը վկայեց այն մասին, որ Նա Աստծո Որդին է, և Աստված ընդունել է Նրա մահը՝ որպես մեր մեղքերի ամբողջական հատուցում: Հիմա մարդիկ կարող են լիարժեքորեն ներվել, հաշտվել Աստծո հետ և, հավատալով Հիսուս Քրիստոս Անձին ու Նրա կատարած գործին, ստանալ հավիտենական կյանք: Փրկության այս մեծ աշխատանքով Աստված բացահայտեց, թե Ով է Ինքը:

Աստծո բնավորությունը

Ավետարանը հասկանալու համար մենք պետք է հասկանանք, թե Ով է Աստված: Աստված չանձնավորված ուժ կամ մեզ շրջապատող էներգիա չէ, այլ մեր անձնական Արարիչն է և բոլորի Տերը (տե՛ս Ծնն. 1-ին գլուխ):

Աստվածաշունչը սովորեցնում է, որ միակ իրական Աստված գոյություն ունի Երրորդության մեջ՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի (տե՛ս Մատթ. 3.16,17, 28.19): Նրանք երեք առանձին Անձեր են՝ միմյանցից տարբերվող, սակայն մեկ էություն են և ոչ թե երեք (տե՛ս Հովհ. 10.30-33): Նրանք կիսում են մեկ աստվածային էություն՝ միևնույն աստվածային հատկանիշներով: Այդ հատկանիշներն են, որ Աստծուն եզակի են դարձնում, և Տերը մեղքի համար զոհ է պահանջում, որպեսզի մեղավորները փրկվեն: Ուստի, հասկանալու համար, թե ինչու էր Քրիստոսի մահն անհրաժեշտ, պետք է ավելի լավ ճանաչենք այս եռամեկ Աստծո բնավորությունը:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Փոլ Մ. Սմոլիին՝ այս գրքույկի խմբագրման գործում ցուցաբերած օգնության համար:

Աստված սեր է

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Աստված սեր է (տե՛ս Ա Հովհ. 4.8), և Նրա սերն է մղում Նրան ազատ կամքով և անձնվիրաբար տալ Իրեն ուրիշների բարու և օգտի համար: Կարևոր է հասկանալ, որ Աստծո սերն ավելին է, քան վերաբերմունք, զգացմունք կամ Նրա կողմից կատարված ինչ-որ գործողություն: Սերն Աստծո դրվածքն է՝ Նրա բուն էությունը կամ բնույթը: Աստված ոչ միայն սիրում է, այլև սեր *է:* Նա է սիրո էությունը, իրական սերը մշտապես բխում է Նրանից, քանի որ Նա է սիրո աղբյուրը: Կան այլ խոսքեր, որոնք կապակցվում են Աստծո սիրո հետ՝ բարյացակամություն, ողորմություն, շնորհք և համբերատարություն: Անկախ այն բանից, թե ինչ ենք մտածում, կամ նույնիսկ՝ լսում, Աստվածաշնչի աներեր վկայությունն այն է, որ Աստված սեր է:

> «Նա, ով չի սիրում, Աստծուն չի ճանաչել, որովհետև Աստված սեր է» (Ա Հովհաննես 4.8):

> «Բարեգութ և ողորմած է Տերը. երկայնամիտ և բազմագութ» (Սաղմ. 103.8, տե՛ս նաև Ելից 34.6, Սաղմ. 86.15, 145.8):

> «Եվ դրա համար Տերը սպասելու է, որ ձեզ ողորմի, և դրա համար բարձրանալու է, որ ձեզ գթա...» (Եսայի 30.18):

> «Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում՝ լույսի Հորից, որի մեջ բնավ փոփոխում կամ դարձվածքի շուք չկա» (Հակոբոս 1.17):

Աստված սուրբ է

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Աստված սուրբ է (տե՛ս Եսայի 6.3): «Սուրբ» բառը կրում է հետևյալ իմաստները՝ «առանձնացված», «նշագրված» կամ «զատված»: Ինչ վերաբերում է Աստծուն, այն երկու կարևոր իմաստ է կրում: Առաջինը՝ նշանակում է, որ Աստված վեր է ամբողջ արարչությունից և լիովին տարբերվում է արարված ամեն էակից: Որքան էլ հրաշալի լինեն այս երկրում կամ երկնքում ապրող էակները, նրանք պարզապես արարածներ են: Միայն Աստված է Աստված՝ առանձին, վերընտիր և անհամեմատելի: Երկրորդը՝ Աստծո սրբությունը խոսում է այն մասին, որ Նա վեր է ու զատված Իր արարչության բարոյական ապականությունից և ամեն անվայել ու մեղսալի բաներից: Աստված չի կարող մեղք գործել, մեղքից հաճույք ստանալ կամ հարաբերվել մեղքի հետ:

> «Եվ մեկը կանչում էր մյուսին և ասում.
> «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ է Զորաց Տերը.
> ամբողջ երկիրը լի է Նրա փառքով»» (Եսայի 6.3):

> «...Աստված լույս է, և ոչ մի խավար չկա նրանում» (Ա Հովհաննես 1.5)

> «Դու, որ աչքերդ մաքուր են չարություն տեսնելուց, և անիրավության մտիկ տալ չես կարող...» (Ամբակում 1.13):

> «Նա, ով փորձության մեջ է, չասի թե Աստծուց եմ փորձվում. որովհետև Աստված չար բաներով չի փորձվում. Ինքն էլ ոչ մեկին չի փորձում» (Հակոբոս 1.13):

> «Որովհետև Դու անօրինության հաճություն տվող Աստված չես. չարը չի բնակվի Քեզ մոտ» (Սաղմոս 5.4):

Աստված արդար է

«Արդար» բառը խոսում է Աստծո բարոյական գերազանցության մասին: Ըստ Աստվածաշնչի՝ Աստված բացարձակապես արդար է և հետևողականորեն գործում է Իր կատարյալ էության համեմատ: Աստծո բնույթի կամ Նրա գործերի մեջ չկա որևէ սխալ կամ անճշտություն: Նա երբեք չի լինի այնպիսին և չի անի այնպիսի քայլ, որի համար Իրեն հնարավոր կլինի արդարացիորեն մեղադրանք ուղղել: Նրա գործերը, պատվիրանները և դատաստանները բացարձակապես կատարյալ են:

> «Որովհետև Տերն արդար է և արդարություն է սիրում. ուղիղները կտեսնեն Նրա երեսը» (Սաղմոս 11.7):

> «Աստծո գործը կատարյալ է, որովհետև Նրա բոլոր ճանապարհները իրավունք են. Աստված հավատարիմ է և անիրավություն չունի. արդար և ուղիղ է Նա» (Երկրորդ Օրինաց 32.4):

Աստծո արդարությունը ոչ միայն նկարագրում է Նրա բնավորությունը, այլև Նրա հարաբերությունն Իր արարչության՝ հատկապես մարդկության հետ: Ըստ Աստվածաշնչի՝ Աստված Իր կամքը բացահայտել է բոլոր մարդկանց համար՝ Իր արարչության (տե՛ս Հռոմ. 1.20,32), ինչպես նաև մարդու խղճմտանքի (տե՛ս Հռոմ. 2.14-16) միջոցով: Նաև ամենապարզ ձևով բացահայտել է Իրեն Իր Խոսքի՝ Աստվածաշնչի միջոցով (տե՛ս Սաղմ. 19.7-11): Ուստի, ամեն մարդ դատվելու

է այն չափորոշիչով, որը բացահայտվել է իր համար: Կգա մի օր, երբ Աստված բոլորին կդատի արդարության և ազնվության խստագույն չափորոշիչներով՝ վարձահատույց լինելով կատարած բարու համար և պատժելով չարը:

> «Բայց Տերը հավիտյան կա. Նա Իր աթոռը պատրաստեց դատաստանի համար:
> Եվ Նա այս աշխարհը արդարությունով կդատի և ազգերին ուղղությունով իրավունք կանի» (Սաղմոս 9.7,8):

> «Որովհետև Աստված ամեն գործ բերելու է դատաստան՝ ամեն ծածուկ բանի հետ՝ թե՛ բարի, թե՛ չար» (Ժողովող 12.14, տե՛ս նաև Առակ. 5.21, 15.3, Եբր. 4.13):

> «Ես՝ Տերս, քննում եմ սիրտը, փորձում եմ երիկամունքը, որ տամ մարդուն իր ճանապարհների համեմատ և իր գործերի պտղի համեմատ» (Երեմիա 17.10, տե՛ս նաև Եբր. 9.27):

Մենք պետք է գիտակցենք, որ մարդկանց հանդեպ Աստծո դատաստանը անհիմն և դաժան չէ, այն Աստծո արդար բնավորության դրսևորումն է և Իր կառավարման անհրաժեշտ բաղադրիչը: Այն Աստված, Ով կհրաժարվեր չարությունը պատժելուց, չէր լինի սիրող, բարի կամ արդար: Այն արարչությունը, որտեղ չարությունը չի զսպվում և դատվում, շուտով կգնա ինքնաոչնչացման:

Հանդիպե՞լ եք այս Աստծուն: Աստծո մասին խոսելը մեկ բան է, սակայն Աստվածաշնչում Նրա փառքին հանդիպելը մեկ այլ բան է: Որտեղ Աստծուն իրապես ճանաչում են, ամբողջ մարդկությունը ոչինչ է դառնում: Նրա սրբության նվազագույն առ-

կայծումը խոնարհեցնում և սպառնում է չեղարկել մեզ: Նույնիսկ մեր սկզբնական, անբասիր վիճակում, երբ Աստված նոր էր ստեղծել մեզ, մենք պարզապես պատկեր էինք և ծառա, իսկ Նա Ամենակարող Աստված էր: Սակայն, նույնիսկ այդ կետից ավելի ցածր ենք ընկել, քանի որ մեղանչել ենք Նրա դեմ:

Մարդկության բնավորությունը

Ավետարանը հասկանալու և գնահատելու համար մենք ոչ միայն պետք է ճանաչենք Աստծո բնավորությունը, այլև՝ մերը: Այն, ինչ ասում է Աստվածաշունչը մեր մասին, շոյող կամ հաճելի չէ, սակայն ճշմարիտ է:

Մարդկությունը բարոյապես ապականված է

Մինչ մեղքի մեջ ընկնելը՝ սկզբնականում, մարդն ազնիվ էր, իսկ ներկայումս մարդու վիճակը սարսափելի է: Աստվածաշունչը սովորեցնում է, որ չնայած այն բանին, որ մարդկությունը բարի է ստեղծվել (տե՛ս Ծննդ. 1.26,31), բոլորն ընկել են հոգևոր մահվան մեջ (տե՛ս Եփես. 2.1): Մենք բնույթով բարոյապես ապականված ենք՝ հակված չարին և թշնամացած արդար Աստծո դեմ:

> «Սակայն, ահա սա գտել եմ, որ Աստված մարդուն ուղիղ է ստեղծել, բայց նրանք շատ հնարքներ են որոնել» (Ժողովող 7.29):

> «Խորամանկ է սիրտն ամենից ավելի և ապականված. նրան ո՞վ կարող է հասկանալ» (Երեմիա 17.9):

> «Որովհետև սրտից դուրս են գալիս չար խորհուրդներ, սպանություններ, շնություններ, պոռնկություններ, գո-

ղություններ, սուտ վկայություններ, հայհոյություններ» (Մատթեոս 15.19):

«Եվ մենք՝ ամենքս, պիղծ բանի պես ենք դառել, և դաշտանի շորի պես է մեր ամեն արդարությունը, և տերևի պես մենք՝ ամենքս, թոռոմել ենք, և մեր հանցանքները քամու պես վեր են առնում մեզ» (Եսայի 64.6):

«Որովհետև մարմնի խորհուրդը՝ Աստծո դեմ թշնամություն է. որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և չի էլ կարող» (Հռոմեացիների 8.7):

Գուցե ձեզ վիրավորեն վերոնշյալ սուրբգրային խոսքերը, սակայն այդպիսին է մարդկության պատկերը, որը հաստատվել է պատմության բոլոր էջերում: Ավելին՝ եթե ինքներդ ձեզ հետ անկեղծ լինեք, ապա կընդունեք, որ այս խոսքերի ճշմարտացիությունը հաստատվում է նաև ձեր մտքերով, խոսքերով և գործերով, որոնցով շարունակաբար խախտում եք Աստծո Տասը պատվիրանները (տե՛ս Ելից 20.1-17, Մատթ. 5.21-48):

Մեղավոր և դատապարտված

Աստվածաշունչը սովորեցնում է, որ մեր ներքին բարոյական ապականությունը ստիպում է մեզ անել բաներ, որոնք դեմ են սուրբ, արդար և սիրող Աստծո արդար չափորոշիչներին: Բոլորս՝ առանց բացառության, մեղավորներ ենք՝ թե՛ բնույթով, և թե՛ գործերով: Բոլորս Աստծո առջև մեղավոր ենք և առանց արդարացման:

«Որովհետև ամենքը մեղանչեցին և Աստծո փառքից պակասած են» (Հռոմեացիների 3.23):

«... մարդ չկա, որ չմեղանչի...» (Գ Թագավորաց 8.46):

«Ինչպես որ գրված է, թե՝ արդար չկա՝ մեկն էլ չկա: Չկա իմացող, չկա Աստծուն խնդրող. ամենքը խոտորվեցին, միասին անպիտան եղան. չկա բարություն անող, նույնիսկ մեկն էլ չկա» (Հռոմեացիների 3.10-12):

«Բայց գիտենք, թե այն, ինչ օրենքն ասում է, նրանց է ասում, որ օրենքի տակ են. որ ամեն բերան խփվի, և ամբողջ աշխարհն Աստծո առջև դատապարտ լինի» (Հռոմեացիների 3.19):

«Տե՛ր, եթե Դու անօրինությունները համարես, ո՞վ կկենա, Տե՛ր» (Սաղմոս 130.3):

Քննե՛ք ձեզ: Արդյոք մեղավո՞ր եք: Հարցն այն չէ, որ սխալ եք գործել: Խոսքը չի վերաբերում ձեր մի քանի սխալ քայլերն ընդունելուն. արդյո՞ք գիտակցում եք, որ մեղավոր սիրտ ունեք և խախտել եք Աստծո օրենքները: Արդարացումներ մի՛ փնտրեք: Մի՛ ձևացրեք, թե ընդհանուր առմամբ լավ մարդ եք: Եթե այդպես վարվեք, ապա Հիսուսը ձեզ տալու ոչինչ չի ունենա, քանի որ Նա մեղավորների համար է եկել: Սակայն եթե կսկիծով ընդունեք ձեր մեղքը, ապա Աստծո իմաստության շնորհիվ, ուշագրավ ձևով լուծված կլինի ձեր մեծ խնդիրը:

Մեծ երկընտրանքը

Մեզ մխիթարում է այն, որ Աստված սուրբ է և արդար: Սարսափելի կլիներ, եթե տիեզերքի Ամենակարող Կառավարիչը լիներ չար: Տրամաբանող մարդուն, սակայն, Աստծո բացարձակ բարությունը ևս անհանգստություն է պատճառում: Եթե Աստված բարի է, ապա ինչպե՞ս է վարվելու նրանց

հետ, ովքեր բարի չեն: Ի՞նչ է անելու բարի և արդար Աստված այն մարդկանց, ովքեր եսակենտրոն են, հակված են չարին և անհնազանդ են: Եթե ամբողջ երկրի Դատավորը մեզ հետ վարվի արդարության հիմունքներով, մի՞թե չի դատապարտի բոլորիս:

Այս հարցերը տանում են մեզ կրոնական և փիլիսոփայական ամենամեծ երկընտրանքին՝ ինչպե՞ս կարող է արդար Աստված ներել նրանց, ովքեր պետք է արդարացիորեն դատապարտված լինեն: Ինչպե՞ս կարող է սուրբ Աստված ընկերանալ նրանց հետ, ովքեր չար են: Անզգամին արդարացնողը զզվելի է Տիրոջը (տե՛ս Առակ. 17.15): Այդ դեպքում ինչպե՞ս կարող է Աստված արդարացնել մեզ պես մեղավորներին և շարունակել մնալ արդար (տե՛ս Հռոմ. 3.26):

Աստծո պատասխանը մեր երկընտրանքին

Եթե Աստված վարվի Իր արդարության համեմատ, ապա մեղավորը պետք է դատապարտված լինի: Եթե Աստված ների մեղավորին, ապա փոխզիջման կենթարկի Իր արդարությունը: Բոլոր երկընտրանքներից մեծագույնի պատասխանը կարելի է գտնել միայն Ավետարանում: Իր արդարությամբ Աստված դատապարտեց մարդկությանը և պահանջեց Իր դեմ գործած մեր հանցանքների ամբողջական հատուցումը: Իր սիրով Աստված կրեց մարդկության մեղքերը, տարավ այն պատիժը, որին մենք էինք արժանի, և մահացավ մեր փոխարեն: Այն Աստված, Ում արդարությունը պահանջում էր մեր մեղքերի հատուցումը, զոհաբերեց Իրեն մեր փոխարեն՝ տալով այդ իսկ հատուցումը: Ահա թե ինչն է Ավետարանը դարձնում իրական բարի լուր:

Հիսուս Քրիստոսը՝ մեր Փոխանորդը

Ըստ Աստվածաշնչի՝ մեր հանդեպ Հոր սերը դրդեց Նրան, որ Իր Որդուն զոհի մեր մեղքերի համար, իսկ Որդին՝ մեր հանդեպ սիրուց դրդված, ինքնակամ զոհաբերեց Իրեն մեզ համար:

> «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ՝ հավիտենական կյանք ունենա» (Հովհաննես 3.16):

> «Նա, ով չի սիրում, Աստծուն չի ճանաչել, որովհետև Աստված սեր է:
> Սրանով Աստծո սերը երևաց մեզանում, որ Աստված Իր միածին Որդուն ուղարկեց աշխարհ, որ Նրանով կյանք ունենանք:
> Սրանում է սերը, որ ոչ թե մենք սիրեցինք Աստծուն, այլ՝ որ Նա սիրեց մեզ, և ուղարկեց իր Որդուն՝ քավություն մեր մեղքերի համար» (Ա Հովհաննես 4.8-10):

> [Հիսուսն ասաց]. «Ոչ ոք նրանից ավելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնի իր բարեկամների համար» (Հովհաննես 15.13):

Խաչը

Խաչի վրա Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, զոհաբերեց Իրեն Իր ժողովրդի մեղքերի համար: Պատմաբանների մեծ մասը կարծում է, որ խաչը տանջանքների ամենադաժան միջոցն էր, որ մարդկությունը երբևէ ստեղծել է: Այդ դաժանությունը խոսում է երկու կարևոր իրականության մասին:

Առաջին՝ այդ դաժանությունը ցուց է տալիս Աստծո դեմ մեր թշնամության մեծությունը: Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միակ Որդուն տվեց, իսկ աշխարհն այնպես ատեց Աստծուն, որ ենթարկեց ամենասարսափելի տառապանքների և մահվան:

Երկրորդը՝ այն պատկերում է մեր մեղքերի մեծությունն Աստծո դեմ: Մեր հանցանքներն Աստծո նկատմամբ այնքան ցավալի էին, իսկ մեզ հասանելիք պատիժն՝ այնքան խիստ, որ այն կարելի էր հատուցել միայն Աստծո Որդու աննկարագրելի տառապանքներով և մահով:

Այն ֆիզիկական տառապանքները և մահը, որը Քրիստոսը կրեց խաչի վրա, միանշանակ անհրաժեշտ էին: Այդուհանդերձ, մենք պետք է հասկանանք, որ Նրա տառապանքները պայմանավորված էին ոչ միայն չար մարդկանց դաժանությամբ: Խաչի վրա Քրիստոսը կրեց Աստծո դատաստանը: Աստծո արդարությունը պահանջում էր մեր մեղքերի հատուցումը. Նրա բարկությունը բորբոքված էր մեր դեմ: Աստծո արդարությունը բավարարելու և Նրա բարկությունը հանգցնելու համար Քրիստոսը պետք է տաներ այն դատաստանը, որին մենք էինք արժանի: Ուստի, Նա կրեց մեր մեղքերը, անեծք դարձավ մեր փոխարեն, թողնվեց Աստծո կողմից և տառապեց մեր հանդեպ Աստծո բարկության ամբողջ չափաբաժնի համեմատ:

Քրիստոսը կրեց մեր մեղքերը: Խաչի վրա մեր մեղքերը վերագրվեցին Քրիստոսին: Սա նշանակում է, որ Աստված մեր մեղքերը դրեց Քրիստոսի հաշվին և Նրանը համարեց: Հետևաբար, Քրիստոսը հռչակվեց մեղավոր Աստծո դատաստանի գահի առջև և ստացավ մեղավոր կողմի հատուցումը:

«Մենք՝ ամենքս, ոչխարների պես մոլորվեցինք, յուրաքանչյուրն իր ճանապարհին դարձավ, և Տերը Նրա վրա դրեց մեր ամենի մեղքը» (Եսայի 53.6):

«Որովհետև [Աստված] մեզ համար մեղք դարձրեց Նրան [Քրիստոսին], Ով մեղքի տեղյակ չէր, որպեսզի մենք Նրանում դառնայինք Աստծո արդարությունը» (Բ Կորնթացիների 5.21):

Քրիստոսը կրեց մեր անեծքը: Աստծո կողմից անիծված լինել՝ նշանակում է դառնալ Նրա դժգոհության և դատապարտության առարկան: Մեր մեղքերի պատճառով բոլորս էինք Աստծո անեծքի տակ: Մեզ անեծքից ազատելու համար Քրիստոսը մեր փոխարեն անեծք դարձավ և ենթարկվեց Աստծո դատաստանին: Նա փրկագնեց մեզ, ինչը նշանակում է, որ վճարեց Իր աստվածային արդարությունը բավարարելու գինը, որպեսզի ովքեր Նրան հավատան, ազատված լինեն:

«Որովհետև, որոնք որ օրենքի գործերից են, անեծքի տակ են. քանի որ գրված է, թե՝ անիծյա՛լ լինի ամեն մարդ, որ չի մնում Օրենքի գրքի բոլոր գրվածներում, որ ամենն անի» (Գաղատացիների 3.10):

«Քրիստոսը գնեց մեզ օրենքի անեծքից՝ մեզ համար անեծք լինելով (քանի որ գրված է, թե՝ անիծյա՛լ լինի ամեն փայտից կախվածը)» (Գաղատացիների 3.13):

Քրիստոսը թողնվեց Աստծո կողմից մեր փոխարեն: Մեր մեղքի ամենասարսափելի հետևանքը՝ Աստծուց օտարացումն է՝ Նրա բարեհաճ ներկայությունից և հաղորդությունից զրկվելը:

> «Ձեր անօրինություններն են բաժանում ձեր և ձեր Աստծո մեջտեղը: Եվ ձեր մեղքերը ծածկեցին Նրա երեսը ձեզնից, որ չլսի» (Եսայի 59.2):

Մեզ հավիտենական բաժանումից փրկելու համար Քրիստոսը կրեց մեր մեղքերը Գողգոթայի վրա և Աստծո կողմից թողնվեց մեր փոխարեն:

> «Եվ մոտավորապես ժամը իննին, Հիսուսը մեծ ձայնով աղաղակեց և ասաց. «Էլի՛, Էլի՛, լա՛մա սաբաքթանի. այսինքն, Իմ Աստվա՛ծ, Իմ Աստվա՛ծ, ինչո՞ւ թողեցիր Ինձ»» (Մատթեոս 27.46):

Քրիստոսը կրեց Աստծո բարկությունը մեր փոխարեն:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված բարկացած է մարդու վրա նրա անողոք չարության պատճառով՝ չնայած այն բանին, որ այս ճշմարտությունն այնքան էլ ընդունված չէ: Սաղմոս 7.11-ում ասվում է. «Աստված արդար Դատավոր է, և Աստված ամեն օր բարկանում է ամբարշտի վրա»:

Աստծո բարկությունն անզուսպ, անտրամաբան կամ եսակենտրոն զգացմունք չէ, այլ՝ Նրա սրբության, արդարության և բարու հանդեպ տածած սիրո արդյունքն է: Աստված ատում է մեղքը, և հաճախ Նրա բարկությունը մեղքի դեմ սարսափելի է և կատաղի: Պատճառն այն բանի, որ մարդը կարող է դառնալ Աստծո բարկության առարկան, այն է, որ նա ընտրում է մարտահրավեր նետել Աստծո ինքնիշխանությանը, խախտել Նրա կամքն ու հանձնվել չարին:

Քանի որ բոլորը մեղավոր են, ապա արժանի են Աստծո բարկությանը: Այդուհանդերձ, Քրիստոսն Իր սիրով վերցրեց Աստծո բարկության բաժակը, որին մենք էինք արժանի, և

խմեց մինչև վերջին կաթիլը՝ ամբողջությամբ դատարկելով այն և լիովին բավարարելով Աստծո արդարության պահանջը մեր հանդեպ:

> «Որովհետև այսպես է ասում ինձ Տերը՝ Իսրայելի Աստվածը. «Ա՛ռ այս բարկության գինու բաժակը Իմ ձեռքից և խմեցրո՛ւ բոլոր ազգերին, որոնց մոտ քեզ ուղարկում եմ»» (Երեմիա 25.15):

> «Դարձյալ երկրորդ անգամ Հիսուսը գնաց, աղոթք արեց և ասաց. «Իմ Հա՛յր, եթե կարելի չէ որ այս բաժակն Ինձնից անցնի՝ առանց այն խմելու, Քո կա՛մքը լինի»» (Մատթեոս 26.42):

> «Հիրավի՜ Նա մեր ցավերը վեր առավ և մեր վշտերը բեռնեց Իր վրա, բայց մենք Նրան պատվահարված էինք համարում, Աստծուց զարկված և նկուն եղած: Բայց Նա մեր մեղքերի համար վիրավորվեց և մեր անօրինությունների համար հարվածվեց, մեր խաղաղության պատիժը Նրա վրա եղավ, և Նրա վերքերով մենք բժշկվեցինք» (Եսայի 53.4,5):

Մեր անիրավությունների դեմ Աստծո դատաստանի ամենամեծ ապացույցը ֆիզիկական մահն է՝ հոգու բաժանումը մարմնից: Ադամի ժամանակներից մինչև ներկա ժամանակները մարդիկ առերեսվում են այն սարսափելի և անհերքելի իրականությանը, որ մահանալու են (տե՛ս Հռոմ. 5.12): Աստվածաշունչը սովորեցնում է, որ մահը սկզբնապես արարչության բնական մաս չի կազմել: Այն Աստծո դատաստանն է մարդկանց հանդեպ՝ նրանց մեղքերի պատճառով: Մահվան

իշխանությունից մեզ փրկելու համար Քրիստոսը պետք է մահանար մեր փոխարեն:

> «Որովհետև մեղքի վարձքը մահն է...» (Հռոմեացիների 6.23):

> «Եվ Հիսուսը մեծ ձայնով կանչեց և ասաց. «Հա՛յր, Հոգիս Քո ձեռքն եմ ավանդում», և այս ասելով՝ Հոգին տվեց» (Ղուկաս 23.46):

> «Որովհետև Քրիստոսն էլ մեկ անգամ մեղքերի համար չարչարվեց, այն Արդարն անարդարների վրա, որ մեզ մոտեցնի Աստծուն. որ թեև մեռավ մարմնով, բայց կենդանի եղավ Հոգով» (Ա Պետրոս 3.18):

Քրիստոսը չմահացավ՝ պարզապես որպես նահատակ, այլ՝ որպես Փրկագնող մեղավոր մարդկությանը: Մինչև հոգին ավանդելը՝ Նա ասաց. «Կատարվե՛ց» (տե՛ս Հովհ. 19.30): Երբ սա ասաց, նկատի ուներ, որ Իր տառապանքներով և մահով ամբողջությամբ վճարեց Իրեն հավատացողների մեղքերի գինը:

Հավատո՞ւմ եք, որ Քրիստոսը մահացել է մեղավորների համար: Եթե չեք հավատում, ապա ինչո՞ւ եք հակառակվում Աստծո Խոսքին, որը չի կարող ստել: Եթե հավատում եք, ապա ի՞նչ ազդեցություն է թողել ձեզ վրա այս մեծ ճշմարտությունը: Արդյոք շարունակո՞ւմ եք անտարբեր մնալ խաչված Տիրոջ նկատմամբ: Կամ, որ ավելի վատ է, օգտագործո՞ւմ եք Քրիստոսի խաչը՝ որպես արդարացում չար ու անբարո կյանք վարելու համար: Եթե Քրիստոսի մահն իսկապես դիպել է ձեր սրտին, ապա չեք կարող շարունակել ապրել ինքներդ ձեզ համար, այլ՝ ներքին մղում կունենաք ապրելու

Նրա համար, Ով մահացել ու հարություն է առել ձեզ համար: Երբ Աստված բացի ձեր աչքերը՝ տեսնելու Իր իմաստությունը և զորությունը Խաչի մեջ, դուք երբեք նույնը չեք մնա, այլ կհետևեք հարություն առած Քրիստոսին:

Հարությունը

Աստվածաշունչը վկայություն է տալիս, որ Քրիստոսը ոչ միայն մահացել է Իր ժողովրդի մեղքերի համար, այլև երրորդ օրը հարություն է առել մեռելներից: Հիսուս Քրիստոսի հարությունը հիմքային կարևորություն ունի քրիստոնեության համար: Եթե Քրիստոսը հարություն առած չլիներ, ապա Ավետարանը առասպել կլիներ, իսկ մեր հավատքը՝ անպիտան (տե՛ս Ա Կորնթ. 15.14): Սակայն, քանի որ Քրիստոսի հարությունը պատմական փաստ է, այն վավերացնում է Քրիստոսի Անձը՝ ով Նա ներկայացել է, և ինչ Նա արել է մեր փոխարեն:

Հարությունը ապացույցն է այն բանի, որ Հիսուսն Աստծո Որդի է: Հովհաննես 2.18,19 խոսքերում հրեա առաջնորդները խնդրեցին Հիսուսին, որ նշան տա, որ Ինքն իշխանություն ունի Աստծո տաճարը մաքրելու: Ի պատասխան՝ Հիսուսն ասաց. «Քանդե՛ք այս տաճարը, և Ես երեք օրում կկանգնեցնեմ»: Հռոմեացիների 1.4-ում Պողոս առաքյալը գրում է, որ Հիսուսը «սահմանվեց զորությունով՝ սրբության Հոգու կողմից՝ մեռելներից հարություն առնելուց»: Սա չի նշանակում, որ Հիսուսը հարություն առնելով դարձավ Աստծո Որդի, այլ՝ որ հարությունը Հոր վավերացումն էր այն մասին, որ Հիսուսն Աստծո հավիտենական Որդին է:

Հարությունը ապացույցն է այն բանի, որ Աստված ընդունել է Քրիստոսի մահը՝ որպես մեր մեղքերի ամբողջական

հպտուցում: Հռոմեացիների 4.25-ում ասվում է, որ Քրիստոսը «մատնվեց մեր հանցանքների համար և հարություն առավ մեզ արդարացնելու համար»: Այս խոսքերը նշանակում են, որ Աստված Հիսուս Քրիստոսին հարություն տվեց, քանի որ Նրա մահով բավարարված էր Աստծո արդարությունը և ապահովված էր հավատացյալների ներումն ու ճիշտ դիրքն Աստծո առջև (արդարացումը):

Հարությունը՝ հավատացյալների ապագա հարության ապացույցն է: Հովհաննես 11.25 խոսքում Հիսուսն ասում է. «Ես եմ հարությունը և կյանքը. Ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի»:

Այս խոստումը ի չիք կդառնար, եթե Քրիստոսը մնար գերեզմանում: Նրա հարությունն ապացուցեց Նրա իշխանությունը մահվան վրա: Այն ապացուցեց, որ Նա իշխանություն ունի կյանքի կոչելու նրանց, ովքեր հավատում են Իրեն: Կորնթացիների Առաջին թղթի 6.14-ում Պողոս առաքյալը գրում է. «Աստված, որ մեր Տիրոջն էլ հարություն տվեց, ձեզ էլ հարություն կտա Իր զորությամբ»:

Հարությունն ապացույցն է այն բանի, որ աշխարհն ունի Տեր և Դատավոր: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Քրիստոսը ոչ միայն հարություն առավ մեռելներից, այլև Աստված բարձրացրեց Նրան՝ լինելու ամբողջ արարչության Տերն ու Դատավորը: Հարությունից հետո քարոզված առաջին քարոզի ժամանակ Պետրոս առաքյալը հայտարարեց հրեաներին. «Հիմա թող ստույգ գիտենա Իսրայելի ամբողջ տունը, որ Աստված Նրան Տեր և Օծյալ արեց, սույն այս Հիսուսին, Ում դուք խաչեցիք» (Գործք 2.36):

Պողոս առաքյալը հռչակեց նաև հետևյալ ճշմարտությունը.

«Նրա համար էլ Աստված շատ բարձրացրեց Նրան և մի անուն շնորհեց, որ ամեն անունից ավելի բարձր է. Որ Հիսուսի անունով կրնկվի ամեն ծունկ երկնավորների և երկրավորների և երկրի տակ լինողների» (Փիլիպեցիների 2.9,10):

«Աստված... պատվիրում է ամենին ամեն տեղ ապաշխարել: Մեկ օր հաստատեց որ Նրանում աշխարհն արդարությամբ պիտի դատի այն մարդու ձեռքով, որ սահմանեց Նրանով ամենին հավատք տալ, Որին մեռելներից հարություն տվեց» (Գործք 17.30,31):

Հարության բարի լուրը ցույց է տալիս, որ քրիստոնեությունը պարզապես օրենքների ցանկ կամ կյանքի փիլիսոփայություն չէ: Այն լոկ բանավեճի թեմա կամ դիրքորոշում չէ: Քրիստոնեության սրտում Հիսուս Քրիստոսի կենդանի անձն է: Տեր Հիսուսն այսօր խոսում է Իր Խոսքի՝ Աստվածաշնչի միջոցով, և զորավոր կերպով փրկում մեղավորներին: Արդյոք հանդիպե՞լ եք Նրան: Արդյոք Նա փրկե՞լ է ձեզ Իր մահվան ու հարության հրաշափառ աշխատանքով:

Քրիստոսի կատարած գործը

Իր մահվանից անմիջապես առաջ Քրիստոսը հռչակեց՝ «Կատարված է» (Հովհաննես 19.30): Այս համառոտ փաստարկը Քրիստոսի հաղթանակի հռչակումն էր: Իր մահով Նա կատարեց ամենը, ինչ մարդկությանն անհրաժեշտ էր փրկության համար: Աստծո արդարության պահանջը մեր հանդեպ բավարարված էր, և Նրա բարկությունը հանդարտված էր: Աստված և՛ արդար է, և՛ չար մարդկանց արդարացնողն է (տե՛ս Հռոմ. 3.26): Քրիստոսի խաչի վրա «Ողորմութ-

յուն և ճշմարտություն իրար հանդիպեցին. արդարություն և խաղաղություն իրար համբուրեցին» (Սաղմոս 85.10): Հիմա Քրիստոսի Անձի և Նրա կատարածի հանդեպ հավատքով մեզ հասանելի են ներումն ու արդարացումը:

> «Արդ մենք՝ հավատքով արդարացած լինելով, Աստծո հետ խաղաղություն ունենք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով: Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսում լինողների համար, որ մարմնավորապես չեն վարվում, այլ՝ հոգևորապես» (Հռոմեացիների 5.1, 8.1):

> «Հիսուսը նրան ասաց. «Ես եմ Ճանապարհը և Ճշմարտությունը և Կյանքը. ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ՝ Ինձնով»» (Հովհաննես 14.6):

> «Եվ էլ ուրիշ ոչ մեկով փրկություն չկա. որովհետև ուրիշ անուն էլ չկա երկնքի տակ մարդկանց տրված, որով կարելի լինի մեզ փրկվել» (Գործք 4.12):

> «Որովհետև մեկ Աստված կա և մեկ միջնորդ՝ Աստծո և մարդկանց մեջ՝ Քրիստոս Հիսուս Մարդը» (Ա Տիմոթեոս 2.5):

Մեր արձագանքը

Հաշվի առնելով Աստծո կատարած գործը մեղավոր մարդկության փոխարեն՝ այժմ պետք է ինքներս մեզ հարց ուղղենք՝ ինչպե՞ս արձագանքել՝ նման մեծ փրկությունից օգտվելու համար, կամ՝ ի՞նչ պետք է անել՝ փրկվելու համար: Աստվածաշունչը մարդկանցից երկու բան է պահանջում՝ (1) ապաշխարել մեղքերից և (2) վստահել Հիսուս Քրիստոս Անձին ու Նրա կատարած գործին:

«[Հիսուս Քրիստոսն ասաց]. «Թե ժամանակը կատարվել է, և Աստծո թագավորությունը մոտեցել է. ապաշխարե՛ք և հավատացե՛ք Ավետարանին»» (Մարկոս 1.15):

«...[Պողոս առաքյալը] հրեաներին և հույներին վկայություն տալով՝ ապաշխարել դեպի Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատալ» (Գործք 20.21):

Ապաշխարություն

Ապաշխարությունը նվեր է Աստծուց (տե՛ս Գործք 11.18) և Սուրբ Հոգու աշխատանքն է մեղավորի սրտում, որը բերում է մտքի փոփոխության (տե՛ս Ա Թեսաղ. 1.5,9): Սա կարող է մակերեսային թվալ, քանի դեռ չենք հասկացել, որ սիրտ ասվածը մեր մտքի, կամքի և զգացմունքների կառավարման կենտրոնն է: Այս պատճառով մտքի փոփոխությունը համարվում է իրական, երբ իրական փոփոխություններ են տեղի ունենում մեր վերաբերմունքի և վարքի մեջ:

Ապաշխարության հրաշալի օրինակ կարելի է տեսնել տարսոնացի Սողոսի կյանքում, ով հետագայում կոչվեց Պողոս: Իր անգիտության և անհավատության մեջ նա կարծում էր, թե Հիսուս Նազովրեցին ոչ այլ ոք էր, քան ինքնակոչ և սրբապիղծ մեկը, իսկ բոլոր նրան հետևողները Աստծո թշնամիներն էին և արժանի էին մահվան (տե՛ս Գործք 9.1,2, Ա Տիմոթ. 1.13): Այդուհանդերձ, Դամասկոսի ճանապարհին Սողոսը հանդիպում ունեցավ հարություն առած Քրիստոսի հետ (տե՛ս Գործք 9.3-8) և բացահայտեց, որ Նրա մասին իր համոզմունքները սխալ էին: Նա կարծում էր, թե Հիսուսը սրբապիղծ էր, սակայն բացահայտեց, որ Նա Աստծո Որդին էր՝ խոստացված Մեսիան և աշխարհի Փրկիչը: Կարծում էր, թե

արդարությունը հնարավոր է վաստակել օրենքին հնազանդվելով, այնինչ բացահայտեց, որ իրենում ոչ մի բարի բան չկար (տե՛ս Հռոմ. 7.18), և որ փրկությունը նվեր էր Աստծուց (տե՛ս Եփես. 2.8,9): Կարծում էր, թե Հիսուսի աշակերտներն Իսրայելի թշնամիներն էին ու արժան չէին ապրելու (տե՛ս Գործք 8.1), մինչդեռ բացահայտեց, որ ինքն էր իրականում Իսրայելին հալածողը (տե՛ս Գաղատ. 6.16) և կենդանի Աստծո որդիներին ու դուստրերին մահվան մատնողը (տե՛ս Հռոմ. 8.14,15):

Քրիստոս Հիսուսի հետ միայն մեկ հանդիպումը տարսոնացի Սողոսին՝ այդ հպարտ և ինքնահավան փարիսեցիների փարիսեցուն, ապացուցեց նրա սխալը: Նա ապաշխարեց և անմիջապես սկսեց ժողովարաններում Հիսուսի մասին քարոզել՝ ասելով, որ «Նա է Աստծո Որդին» (Գործք 9.18-22): Այդ լուրը տարածվեց Հուդայի բոլոր եկեղեցիներում. «Նա, որ մի ժամանակ հալածում էր մեզ, հիմա այն հավատքն է ավետարանում, որ առաջ կործանում էր» (Գաղատ. 1.22,23): Պողոսի մտքի փոփոխությունը փոփոխության էր ենթարկել ամեն բան:

Փոփոխություն մեր մտածելակերպում: Ապաշխարությունը ներառում է մտքի փոփոխություն, որը ստիպում է գիտակցել, որ այն, ինչ Աստված է ասում, ճիշտ է, իսկ մենք սխալ էինք:

> «Որովհետև ես ճանաչում եմ իմ անօրինությունները, և իմ մեղքն ամեն ժամանակ իմ առջև է: Միմիայն Քո դեմ մեղանչեցի և չարը Քո աչքի առջև գործեցի, որ Դու արդար լինես քո խոսքերում, և մաքուր լինես Քո դատաստանում» (Սաղմոս 51.3,4):

«Եվ աղոթեցի իմ Տեր Աստծուն և խոստովանեցի ու ասացի. «...Ո՜հ, Տե՛ր, մեծ Աստված և ահավոր, որ ուխտ և ողորմություն ես պահում Քեզ սիրողներին և պատվիրաններդ պահողներին: Մենք մեղանչեցինք և անօրինություն գործեցինք և ամբարիշտ եղանք ու ապստամբեցինք և խոտորեցինք Քո պատվիրաններից ու իրավունքներից»» (Դանիել 9.4,5):

Փոփոխություններ մեր զգացմունքներում: Մեր մեղսալիության և մեղավորության անկեղծ գիտակցումը հանգեցնում է անկեղծ վշտի, ամոթի և նույնիսկ ատելության՝ այն ամենի, ինչ դարձել ենք կամ արել ենք: Սկսում ենք արհամարհանք, խորն ամոթ ու զզվանք տածել այն մեղքի նկատմամբ, որը ժամանակին սիրում էինք:

«Եվ այնտեղ պիտի հիշեք ձեր ճանապարհները և ձեր բոլոր գործերը, որոնցով պղծվեցիք, և պիտի զզվեք ձեր անձերից ձեր արած բոլոր չարությունների համար» (Եզեկիել 20.43):

«Իրավ՝ իմ դառնալուց հետո զղջացի, և խելոքանալուցս հետո զարկեցի իմ ազդրին, ամաչեցի և պատկառեցի էլ, որովհետև կրեցի իմ մանկության անարգանքը» (Երեմիա 31.19):

«Որովհետև ինչ որ գործում եմ, չգիտեմ. որովհետև ոչ թե՝ ինչ որ կամենում եմ, այն եմ գործում, այլ՝ ինչ որ ատում եմ, այն եմ գործում: Ես ի՞նչ խեղճ մարդ եմ. ո՞վ կապրեցնի ինձ այս մահվան մարմնից» (Հռոմեացիների 7.15,24):

«Հիմա ուրախ եմ, ոչ թե նրա համար որ տրտմեցիք, այլ՝ որ տրտմեցիք ապաշխարության համար. որ դուք Աստծո ուզած կերպով տրտմեցիք, որ մեզնից ոչ մի բանով չվնասվեք» (Բ Կորնթացիների 7.9):

«Աստծո ընդունելի պատարագները կոտրված հոգին է. կոտրված ու փշրված սիրտը Դու չես անարգի, ո՛վ Աստված» (Սաղմոս 51.17):

Փոփոխություններ մեր գործողություններում: Այն, որ մենք պնդում ենք, թե այլ կերպ ենք մտածում կամ ունենք մեղքի դեմ ընդգծված զգացմունքներ, դեռևս անկեղծ ապաշխարության բավարար ապացույց չէ: Իրական ապաշխարությունը զուգակցվում է կամքի փոփոխությամբ, որը հանգեցնում է ճիշտ գործողությունների, հատկապես, երբ խոսքը վերաբերում է մեղքից շրջվելուն և Աստծուն հնազանդվելուն:

«Արդ, ապաշխարության արժանի պտուղ արեք» (Մատթեոս 3.8):

«...ապաշխարել և դառնալ Աստծուն՝ ապաշխարության արժանի գործեր գործելով» (Գործք 26.20):

«Որովհետև հենց իրենք պատմում են մեր մասին, թե ինչպիսի մուտք ունեցանք ձեզ մոտ, և ինչպես դուք դարձաք կուռքերից դեպի Աստված, որ ծառայեք կենդանի և ճշմարիտ Աստծուն:
Եվ սպասեք Նրա Որդուն Երկնքից, Ում հարություն տվեց մեռելներից՝ Հիսուսին, որ փրկում է մեզ գալու բարկությունից» (Ա Թեսաղոնիկեցիների 1.9,10):

Ինքնավերլուծություն. արդյոք ապաշխարե՞լ եք

Սովորեցինք, որ պետք է ապաշխարենք, որպեսզի փրկվենք: Այժմ պետք է պատասխանել մեկ անձնական հարցի՝ արդյոք ապաշխարե՞լ եք: Հետևյալ բացահայտող հարցերը կօգնեն ձեզ հասկանալ, թե արդյո՞ք իրական ապաշխարությունը ձեր կյանքի իրականությունն է:

1. Արդյո՞ք այժմ այլ կերպ եք մտածում Աստծո վերաբերյալ: Արդյո՞ք գիտակցում եք, որ ամեն ինչի կենտրոնում պետք է լինի Աստված, ոչ թե դուք: Ցավո՞ւմ եք, որ անտեսել եք Աստծուն: Արդյո՞ք գիտակցում եք Նրա արժեքը: Ցանկանո՞ւմ եք փնտրել ու ճանաչել Նրան:
2. Արդյո՞ք այժմ այլ կերպ եք մտածում մեղքի վերաբերյալ: Արդյո՞ք գիտակցում եք, որ մեղքը չարիք է և Աստծո նկատմամբ սարսափելի հանցանք: Ափսոսանք և ամոթ զգո՞ւմ եք ձեր մեղքի պատճառով: Արդյո՞ք ձգտում եք ազատվել և՛ դատապարտությունից, և՛ մեղքի գերությունից: Որոշե՞լ եք խոստովանել ձեր մեղքը և դառնալ Աստծուն՝ ստանալու Նրա ողորմությունը:
3. Արդյո՞ք այժմ այլ կերպ եք մտածում փրկության ճանապարհի վերաբերյալ: Լիովին համաձա՞յն եք, որ Աստծուն կարող եք դառնալ միայն Քրիստոսի Անձի և կատարած գործի շնորհիվ, ոչ թե ձեր սեփական արժանիքներով: Գիտակցո՞ւմ եք, որ ձեր ամենաբարի գործերն Աստծո առջև նման են աղտոտ լաթի. արդյոք լիովին մերժե՞լ եք ձեր սեփական արդարությանն ապավինելը:

Եթե կարող եք հաստատուն պատասխաններ տալ այս հարցերին, և եթե այս ամենը ձեր կյանքում զարգացող իրականություն է, նշանակում է, որ Աստված գործել և գործում է ձեր սրտում՝ լուսավորելով ձեր միտքը, որպեսզի տեսնեք

ճշմարտությունը, և առաջնորդելով ապաշխարության:

Եթե չեք կարող հաստատուն պատասխաններ տալ այս հարցերին, սակայն ցանկանում եք փրկություն ստանալ, ապա շարունակե՛ք փնտրել Աստծուն Նրա Խոսքի և աղոթքի մեջ: Վերանայե՛ք սուրբգրային այն խոսքերը, որոնք ուսումնասիրեցինք, և քննե՛ք ձեր կյանքը դրանց լույսի ներքո:

Շարունակե՛ք կանչել Աստծուն և փնտրել Նրան Իր Խոսքի մեջ, մինչև Նա փոփոխություն կանի ձեր սրտում:

Հավատք

Ապաշխարության հետ միասին մարդու կյանք է գալիս փրկող հավատքը: Այն ավելին է, քան համոզմունք, որ Աստված կա. այն ներառում է վստահություն, համոզվածություն կամ ապավինություն Նրա բնավորության և Խոսքի ճշմարտացիության վրա: Աստվածաշունչն ասում է. «Դու հավատում ես, թե մեկ է Աստված, լավ ես անում. դևերն էլ են հավատում և սարսափում են» (Հակոբոս 2.19): Իրական հավատք ունեցող մարդիկ պարզապես չեն հավատում, որ Աստված կա, այլ վստահում են՝ ինչ Աստված ասել է, և ապավինում են Նրա ասածներին:

Հավատքի սահմանումը

Աստվածաշունչը հավատքը սահմանում է որպես «հուսացած բաների հաստատություն և չերևացող բաների ապացույց» (Եբրայեցիների 11.1): Սա հանգեցնում է մի շատ կարևոր հարցի՝ ինչպե՞ս կարող է տրամաբանող մարդը վստահ կամ համոզված լինել, որ այն, ինչին հուսացած է, և այն, ինչը երբևէ չի տեսել, իրականում գոյություն ունի:

Այս հարցի պատասխանը կարելի է գտնել Աստծո բնավո-

ության, Աստվածաշնչի հավատարժանության և Սուրբ Հոգու ծառայության մեջ: Մենք կարող ենք վստահ լինել մեղքերի ներման և Աստծո հետ հաշտության մեջ, ինչպես նաև ունենալ հավիտենական կյանքի հույս, քանի որ Աստված այս ամենը խոստացել է Իր Խոսքում (տե՛ս Տիտոս 1.2,3), և Աստծո Հոգին մեր սրտերին վկայություն է տալիս, որ դրանք ճիշտ են (տե՛ս Հովհ. 16.13, Հռոմ. 8.14-16, Գաղատ. 4.6, Ա Հովհ. 2.20,27):

Հավատքի կենտրոնացումը

Մասնավորապես, փրկող հավատքի հիմքում այն վստահությունն է, որ Քրիստոսը մեր Փրկիչն է և մեր արդարությունն Աստծո առջև: Իրական ապաշխարության ամենամեծ ապացույցն այն է, որ մենք ոչ միայն շրջվում ենք մեղքից, այլև մեր առավելություններին, արժանիքներին կամ գործերին ապավինելուց՝ Աստծո առջև ճիշտ դիրք ունենալու համար: Գիտակցում ենք, որ մեր մարդկային ենթադրյալ արդարությունը կամ բարի գործերը ամբողջությամբ նման են կեղտոտ լաթի (տե՛ս Եսայի 64.6), և հաստատակամորեն մերժում ենք դրանք՝ որպես փրկության միջոց: Գիտենք, որ մեր հաշտությունը Աստծո հետ՝ Նրա համար արված մեր գործերի արդյունքը չէ, այլ Հիսուս Քրիստոսի միջոցով մեզ համար կատարած Նրա մեծ գործի արդյունքն է: Եվ անվերապահորեն հավատում ենք հետևյալ աստվածաշնչյան խոսքերին:

> «Գիտենք, որ մարդը օրենքի գործերից չի արդարանում, բայց միայն Հիսուս Քրիստոսի հավատքից: Եվ մենք Հիսուս Քրիստոսին հավատացինք, որ Քրիստոսի հավատքից արդարանանք, և ոչ թե օրենքի գործերից. որովհետև օրենքի գործերից ոչ մի մարմին չի արդարանա» (Գաղատացիների 2.16):

«Բայց նրան, որ գործ է անում, վարձքը չի համարվում շնորհքի պես, այլ՝ պարտքի պես: Բայց նրան, որ գործ չի անում, այլ հավատում է Նրան, որ ամբարշտին արդարացնում է, նրա հավատքը համարվում է արդարություն» (Հռոմեացիների 4.4,5):

«Որովհետև շնորհքով եք փրկված հավատքի ձեռքով: Եվ սա ոչ թե ձեզնից է, այլ Աստծո պարգևն է. ոչ թե գործերից, որ մեկը չպարծենա» (Եփեսացիների 2.8,9):

Հավատքի օրինակ

Աբրահամի կյանքով Աստվածաշունչը տվել է մեզ իրական հավատքի հրաշալի օրինակ: Երբ Աբրահամն ու կինը՝ Սառան, արդեն հատել էին երեխա ունենալու տարիքը, Աստված նրանց որդի խոստացավ: Ի պատասխան այս խոստման՝ ինչպես Աստվածաշունչն է ասում, Աբրահամը «համոզված էր, թե Նա, որ խոստացավ, կարող է և անել» (Հռոմեացիների 4.21): Աբրահամը հավատաց Աստծուն, և դա արդարություն համարվեց նրա համար (տե՛ս Հռոմ. 4.3): Ըստ Ավետարանի՝ իրական հավատքը՝ հավատալն ու ապավինելն է այն ամենին, ինչ Աստված հայտնել է Իր մասին, մեր մասին նաև Հիսուս Քրիստոսի կյանքով, մահվամբ ու հարությամբ կատարված Իր փրկարար աշխատանքի մասին: Հավատալ՝ նշանակում է լիովին համոզված լինել, որ Աստված իսկապես պատրաստակամ է և Ամենակարող՝ իրականացնելու այն, ինչ խոստացել է Հիսուս Քրիստոսի միջոցով: Հետևյալ սուրբգրային խոսքերը հրաշալիորեն ներկայացնում են այն, ինչ Աստված խոստացել է:

«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ՝ հավիտենական կյանք ունենա» (Հովհաննես 3.16):

«Բայց ովքեր Նրան ընդունեցին, իշխանություն տվեց նրանց Աստծո որդիներ լինելու՝ նրանց, որ Նրա անվանը հավատում են» (Հովհաննես 1.12):

«[Հիսուսն ասաց]. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե՝ Իմ Խոսքը լսողը և Ինձ ուղարկողին հավատացողը հավիտենական կյանք ունի և դատաստան չի մտնի, այլ՝ մահից կփոխվի դեպի կյանք»» (Հովհաննես 5.24):

Ինքնավերլուծություն. արդյոք հավատո՞ւմ եք

Փրկվելու համար մենք պետք է հավատանք Հիսուս Քրիստոսին: Այժմ պետք է պատասխանել մի անձնական հարցի՝ արդյոք հավատացե՞լ եք: Արդյո՞ք հավատում, վստահում ու ապավինում եք Հիսուս Քրիստոս Անձին ու կատարած աշխատանքին: Հետևյալ բացահայտող բնույթի հարցերը կօգնեն հասկանալ՝ արդյո՞ք իրական հավատքը ձեր կյանքում իրականություն է:

1. Արդյոք համոզվա՞ծ եք, որ փրկություն չկա ոչ մի այլ անունով, միայն Հիսուս Քրիստոսի անունով: Արդյոք համոզվա՞ծ եք, որ մյուս, այսպես կոչված, մարգարեների և փրկիչների պնդումները կեղծ են: Արդյոք ձեր հավիտենական բարեկեցությունը վստահո՞ւմ եք միայն մեկ անձնավորության՝ Հիսուս Նազովրեցու զորությանն ու հավատարմությանը:

2. Համոզվա՞ծ եք, որ փրկությունը ձեր սեփական արժանիքների կամ առաքինությունների արդյունք չէ: Համոզվա՞ծ եք, որ նույնիսկ ձեր ամենաարդար վարմունքները Աստծո առջև կեղտոտ լաթի պես են: Արդյոք համոզվա՞ծ եք, որ գործերով փրկություն ստանալը միանգամայն հուսալի չէ:
3. Արդյոք լիովին ապավինո՞ւմ եք Աստծո Որդուն, որ փրկի ձեզ մեղքերից: Արդյոք կառչա՞ծ եք Նրանից, որ սովորեցնի ձեզ աստվածաշնչյան ճշմարտությունները, Իր արյամբ ների ձեր մեղքերն ու Իր Հոգով փոխի ձեր սիրտը:

Եթե կարողացաք հաստատուն պատասխան տալ այս հարցերին, ապա նշանակում է, որ Աստված աշխատել ու աշխատում է ձեր սրտում՝ լուսավորելով ձեր միտքը, որ տեսնեք ճշմարտությունը և հավատաք փրկությանը:

Եթե չկարողացաք հաստատուն պատասխան տալ այս հարցերին, սակայն ցանկանում եք փրկվել, ապա շարունակե՛ք փնտրել Աստծուն Իր Խոսքի (Աստվածաշնչի) մեջ և աղոթքի միջոցով: Վերանայե՛ք այն խոստումները, որոնք ուսումնասիրեցինք, և քննե՛ք ձեր կյանքը դրանց լույսի ներքո: Շարունակե՛ք կանչել Աստծուն, որպեսզի օգնի ձեզ հաղթահարել անհավատությունը և փրկի ձեզ: Աստվածաշունչը խոստանում է. «Որովհետև, ով Տիրոջ անունը կանչի, կապրի» (Հռոմեացիների 10.13): Շարունակե՛ք փնտրել Նրան Նրա Խոսքի մեջ՝ մինչև Աստծո Հոգին հաստատություն տա ձեզ, որ դուք Աստծո զավակ եք:

> «Նույն Ինքը՝ Հոգին, վկայություն է տալիս մեր հոգուն, որ մենք Աստծո որդիներ ենք» (Հռոմեացիների 8.16):

«Եվ որովհետև դուք որդիներ եք, Աստված Իր Որդու Հոգին ուղարկեց ձեր սրտերի մեջ, որ աղաղակում է՝ Աբբա Հա՛յր» (Գաղատացիների 4.6):

Փրկված լինելու վստահություն

Հիսուսը զգուշացրեց, որ բոլորը չէ, որ կասեն, թե քրիստոնյա են կամ, նույնիսկ, Իրեն Տեր կդավանեն, կմտնեն Երկնքի արքայություն (տե՛ս Մատթ. 7.21): Դատաստանի օրը շատերը սարսափով կիմանան, որ խաբված են եղել, և Քրիստոսը երբեք իրենց չի ճանաչել (տե՛ս Մատթ. 7.23): Այս անհանգստացնող փաստը հանգեցնում է շատ կարևոր հարցի՝ ինչպե՞ս իմանանք, որ իսկապես հավատացել ենք և ունենք հավիտենական կյանք:

Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներին ճանաչում են վերջիններիս պտուղներից (տե՛ս Մատթ. 7.16,19): Այլ կերպ ասած, կան իրական հավատքի նկատելի ապացույցներ: Փրկությունը գործերի արդյունք չէ, սակայն գործերը փրկության ապացույց են: Հակոբոսը գրում է. «...Ցո՛ւյց տուր ինձ քո հավատքը գործերից, և ես էլ ցույց կտամ քեզ իմ հավատքն իմ գործերից... Հավատքն առանց գործերի մեռած է» (Հակոբոս 2.18,26):

Փրկությունը Աստծո գերբնական վերաարարման աշխատանքի արդյունք է, որը Նա անում է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով: Այս պատճառով Պողոսը գրել է. «Ուրեմն, եթե մեկը Քրիստոսում է՝ նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթացիների 5.17): Եթե մենք ճշմարտապես հավատացել ենք Քրիստոսին, ապա իսկապես նոր արարածներ ենք՝ նոր ցանկություններով, որոնք մղում են մեզ ճանաչել Աստծուն ու հաճեցնել Նրան: Այս պատճա-

ռով մենք նոր կյանք ենք սկսում, որն ավելի ու ավելի է արտացոլում Աստծո փրկության գործը մեզանում:

Սա չի նշանակում, որ փրկությունը հավատքով և գործերով է, կամ՝ որ մեր փրկությունը պետք է պահենք մեր գործերով: Պարզապես նշանակում է, որ վերստին ծնունդի (տե՛ս Հովի. 3.3,5) և Աստծո շարունակական աշխատանքի արդյունքը մեր կյանքերում (տե՛ս Եփես. 2.10, Փիլիպ. 1.6, 2.13) այն է, որ մեր մեջ արտացոլվում են Աստծո զավակ լինելու ապացույցները: Որպես քրիստոնյաներ՝ մենք մեծ պայքարներ ունենք մեղքի դեմ և գուցե նույնիսկ ինչ-որ պահի ընկնենք ցավալի մեղքի մեջ: Այդուհանդերձ, եթե ճշմարտապես վերստին ծնված ենք, ապա չենք մնա այդ վիճակում, այլ կապաշխարենք և կշարունակենք աճել Քրիստոսի նմանության մեջ: Սա վստահաբար այսպես է, քանի որ այն Աստված, Ով բարի գործ է սկսել մեզանում, նույնպես ավարտին կհասցնի (տե՛ս Փիլիպ. 1.6):

Փոխակերպման ապացույցները

Աստվածաշունչը սովորեցնում է, որ քրիստոնյաները պետք է քննեն կամ ստուգեն իրենց՝ տեսնելու, թե արդյո՞ք հավատքի մեջ են (տե՛ս Բ Կորնթ. 13.5): Սակայն, որպեսզի նման ստուգումը ճիշտ լինի, մենք պետք է ունենանք ճշմարիտ չափորոշիչ: Իմաստուն չի լինի ինքներս մեզ դատել ըստ մեր սեփական կամ ուրիշների կարծիքների: Աստծո Խոսքն է այն միակ ճիշտ չափորոշիչը, որով կարող ենք դատել մեր հավատքի իրական լինելը, որպեսզի աճենք այն վստահության մեջ, որ փրկված ենք: Հովհաննեսի Առաջին թուղթը գրված է հենց այս նպատակի համար: Հովհաննեսը գրում է. «Այս բաները գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավատացողներիդ, որ գիտենաք, թե հավիտենական կյանք ունեք» (Ա Հովհաննես 5.13):

Այս թղթում մի քանի հատկանիշ է նշվում, որոնք ինչ-որ չափով պետք է դրսևորվեն ամեն ճշմարիտ քրիստոնյայի կյանքում: Ըստ նրա, թե որքանով են այս հատկանիշները դրսևորվում մեր կյանքերում, կարող ենք վստահ լինել, որ ճշմարտապես ճանաչել ենք Քրիստոսին և վերափոխվել Նրա զորությամբ: Հետևյալ պնդումներում ամփոփված են իրական փոխակերպման նշանները: Լավ կլիներ, եթե դրանց լույսի ներքո ուշադրությամբ և աղոթքով քննեինք ինքներս մեզ:

1. Քրիստոնյաները քայլում են լույսի մեջ (տե՛ս Ա Հովհ. 1.5-7): Քրիստոնյաների բնավորությունն ու վարքագիծը, աստիճանաբար փոխակերպվելով, համապատասխանում է Աստծո կամքին, որը Նա հայտնել է մեզ Աստվածաշնչում:

2. Քրիստոնյաները զգայուն են իրենց կյանքում առկա մեղքի նկատմամբ և խոստովանում են այն (տե՛ս Ա Հովհ. 1.8-10): Քրիստոնյաները դիմադրողականություն չունեն մեղքի նկատմամբ, այլ պայքարում են դրա դեմ: Քրիստոնյաների կյանքին հատկանշական են ապաշխարությունը, խոստովանությունը և աստիճանական հաղթանակը:

3. Քրիստոնյաները պահում են Աստծո պատվիրանները (տե՛ս Ա Հովհ. 2.3,4):

   Քրիստոնյաները վարվում են արդարությամբ (տե՛ս Ա Հովհ. 2.29, 3.7,10) և մեղքը չեն դարձնում իրենց կենսաոճը (տե՛ս Ա Հովհ. 3.4,6,8,9): Քրիստոնյաների կյանքին հատկանշական է այն, որ նրանք փոխակերպվում են՝ համապատասխանելու Աստծո կամքին, ինչպես նաև հատկանշական է խոստովանությունը և

ապաշխարությունը, եթե շեղվել են Աստծո չափորոշիչից: Սա չի նշանակում, որ քրիստոնյաներն ունակ են կատարելապես հնազանդվել Աստծո պատվիրաններին, այլ՝ որ նրանց ապրելակերպն արտացոլում է Աստծո պատվիրանների հանդեպ նոր և աճող գնահատանք, ինչպես նաև շարունակական աճ դրանց հնազանդվելու հարցում:

4. Քրիստոնյաները ձգտում են քայլել Հիսուսի հետ (տե՛ս Ա Հովի. 2.6): Ճշմարիտ աշակերտների մեծ ցանկությունն է լինել իրենց Տիրոջ նման (տե՛ս Մատթ. 10.25): Նրանք ցանկանում են ամեն բանում նմանակել Քրիստոսին (տե՛ս Ա Կորնթ. 11.1, Եփես. 5.1): Հետևաբար, քրիստոնյաների մոտ աստիճանաբար կորում է այս ընկած աշխարհին նմանակելու կամ դրա հավանությանն արժանանալու ցանկությունը:

5. Քրիստոնյաները սիրում են մյուս քրիստոնյաներին, ցանկանում են ընկերակցել նրանց հետ և ծառայել նրանց գործնական քայլերով (տե՛ս Ա Հովի. 2.9-11): Սա փրկության ամենամեծ ապացույցն է (տե՛ս Մատթ. 25.34-40, Ա Հովի. 3.14-18):

6. Քրիստոնյաների համար աստիճանաբար ավելի անցանկալի և մերժելի է դառնում աշխարհը (տե՛ս Ա Հովի. 2.15-17): «Աշխարհ» ասվածը ներկայիս ընկած դարաշրջանի գաղափարներն են, վերաբերմունքը և արարքները, որոնք հակասում և հակադրվում են Աստծո բնույթին և կամքին:

7. Քրիստոնյաները շարունակում են վարվել այն վարդապետություններով և հավատքի գործերով, որոնք

մեկընդմիշտ տրվել են եկեղեցուն՝ Քրիստոսի և Նրա առաքյալների կողմից (տես Ա Հովի. 2.19,24, Հուդա 3): Քրիստոնյաները ուսված են Աստծուց (տես Երեմիա 31.34, Հովի. 6.45) և չեն երերում ամեն կեղծ ուսմունքի քամուց (տես Եփես. 4.14):

8. Քրիստոնյաները ինքնամաքրվում են (տես Ա Հովի. 3.3). ձգտում են աճել սրբության մեջ, որը բարոյական մաքրությունն է (տես Բ Կորնթ. 7.1, Ա Տիմոթ. 4.7, Ա Պետր. 1.15,16): Սա ներառում է ոչ միայն չարից զատվելը, այլև Աստծուն մոտենալը և բարին բռնելը:

9. Քրիստոնյաները հավատում և դավանում են, որ Հիսուսն է Քրիստոսը՝ Աստծո Որդին և աշխարհի Փրկիչը (տես Ա Հովի. 2.22,23, 4.2,13-15): Քրիստոնյաների փրկության մեծ և միակ հույսը Քրիստոսի անձն է և Նրա կատարածը: Նրանք հավատում են հավիտենական կյանքի մասին վկայությանը, որն Աստված տվել է Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով (տես Ա Հովի. 5.10-12):

10. Քրիստոնյաները ենթակա են Աստծո սիրո և հայրական խրատին (տես Եբր. 12.5-11): Աստված թույլ չի տա, որ Իր երեխաները շարունակեն վարվել անհասությամբ և անհնազանդությամբ, այլ կխրատի նրանց, որպեսզի կիսեն Իր սրբությունը և արդարության պտուղներ բերեն: Սա ճշմարիտ փոխակերպման կարևոր նշանն ու բնութագիրն է:

Փրկության օգուտները

Չնայած այն բանին, որ մենք չենք կարող, ինչպես հարկն

է, պարզաբանել և նկարագրել փրկության բոլոր օգուտները մեկ գրքույկի մեջ՝ օգտակար կլինի ուսումնասիրել մի քանիսը: Աստվածաշունչը սովորեցնում է, որ մարդիկ ծնվում են հոգևորապես մահացած և Աստծուն սիրով ու հնազանդությամբ արձագանքելու անպատրաստակամությամբ (տե՛ս Հռոմ. 8.7, Եփես. 2.1): Սակայն, ովքեր հավատում են Քրիստոսին, վերածնվում են (տե՛ս Տիտոս 3.5), կամ՝ հոգևորապես կենդանանում (տե՛ս Եփես. 2.5), որպեսզի քայլեն կյանքի նորոգության մեջ (տե՛ս Հռոմ. 6.4): Հավատացյալը նոր արարած է, ով ունի նոր սիրտ, որն ուրախանում է Աստծով և ցանկանում է հաճեցնել Նրան (տե՛ս Եզեկ. 36.26,27, Բ Կորնթ. 5.17, Ա Հովի. 5.3): Սա է «վերստին ծնված» արտահայտության իրական իմաստը (տե՛ս Հովի. 3.3, նաև Հովի. 3.5, Ա Հովի. 5.1): Մենք ոչ թե պարզապես մտափոխվել ենք, այլ Աստված փոխել է մեր բուն էությունը:

Երկրորդը՝ քրիստոնյան արդարացած է Աստծո առջև (տե՛ս Հռոմ. 5.1): Սա նշանակում է, որ մենք ոչ միայն ներված ենք մեր անցյալի, ներկայի և ապագայի մեղքերից, այլև Քրիստոսի կատարելապես արդար կյանքը վերագրվում է մեզ կամ փոխանցվում է մեր հաշվին: Չնայած այն բանին, որ մենք դեռևս պայքարում ենք մեղքի և հաճախակի անկումների դեմ՝ Աստված օրինականորեն հռչակել է մեզ արդար Իր առջև, և Նա այդպես է վերաբերվում մեզ (տե՛ս Հռոմ. 8.33,34, Բ Կորնթ. 5.21):

Երրորդը՝ քրիստոնյան որդեգրված է: Աստված ամբողջ մարդկության ինքնիշխան Արարիչն ու Դատավորն է: Հավատացյալների համար Նա նաև Հայր է (տե՛ս Գաղատ. 4.5, Եփես. 1.5): Քրիստոսի հանդեպ հավատքի շնորհիվ մենք որդեգրվել ենք Աստծո ընտանիքի մեջ և վայելում ենք որդիության բոլոր առավելությունները (տե՛ս Հովի. 1.12): Չնա-

յած թվում է, թե սա առավել հրաշալի է ճշմարտություն լինելու համար՝ Աստված սիրում է մեզ այնպես, ինչպես սիրում է Իր սեփական Որդուն (տե՛ս Հովի. 17.23), և տալիս է մեզ Իր Հոգին՝ որպես մեր ապագա ժառանգության գրավ (տե՛ս Հռոմ. 8.15, Եփես. 1.13,14):

Չորրորդը՝ քրիստոնյայի ներսում ապրում է Աստծո Հոգին: Մենք միայնակ չենք քայլում այս աշխարհում. Աստված Սուրբ Հոգին ուղարկել է՝ բնակվելու մեր ներսում (տե՛ս Հովի. 14.16,17): Հոգին վկայություն է տալիս Քրիստոսի մասին, սովորեցնում, առաջնորդում, օգնում և հանդիմանում է մեզ, ինչպես նաև գրավ է Աստծո լիության համար, որը հավատացյալին սպասվում է Երկնքում (տե՛ս Հովի. 14.16, 15.26, 16.7,8, Հռոմ. 8.14, Բ Կորնթ. 1.22, 5.5, Եփես. 1.14, Ա Հովի. 2.27): Սուրբ Հոգու շնորհիվ Հիսուս Քրիստոսը շարունակում է լինել մեր Էմմանուելը, ինչը նշանակում է՝ «Աստված մեզ հետ» (տե՛ս Եսայի 7.14, Մատթ. 1.23):

Հինգերորդը՝ քրիստոնյային հավիտենական կյանք է տրվել: Կարևոր է հասկանալ, որ հավիտենական կյանքը մեզ համար սկսվել է այն պահից, երբ հավատացել ենք Հիսուս Քրիստոսին (տե՛ս Հովի. 5.24): Հավիտենական կյանքն ավելին է, քան կյանքի տևողություն (անավարտ կյանք), այն նաև կյանքի որակ է (կյանք՝ Աստծո ընկերակցությամբ): Հիսուսն ասել է. «Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն Քեզ միայն ճշմարիտ Աստված: Եվ Նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուս Քրիստոսին» (տե՛ս Հովի. 17.3):

Վեցերորդը՝ քրիստոնյան Աստծո գործունեության դաշտն է: Մեծագույն ապացույցը, որ Աստված արդարացրել է մեզ, այն է, որ Նա շարունակում է սրբացնել մեզ՝ աշխատում է մեր կյանքերում, որպեսզի մեզ սուրբ դարձնի: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված մեր կյանքում ուղղորդում է

ամեն բան, նույնիսկ Իր խրատներով, որ մենք կերպարանակից լինենք Քրիստոսին և անենք այն բարի գործերը, որոնք նախապես պատրաստել է մեզ համար (տես Հռոմ. 8.28,29, Եփես. 2.10, Եբր. 12.5-11): Ինչպիսի՜ առավելություն է իմանալ, որ Աստված անզիջում աշխատելու է մեր վերափոխման ուղղությամբ: Պողոս առաքյալը գրել է, որ ինքը «հաստատ համոզված է սրանում, թե Նա, Ով ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպեցիների 1.6):

Ի վերջո, քրիստոնյան փառավորված կլինի: Մեր մեծ ու հաստատուն հույսն այն է, որ քանի որ Քրիստոսը հարություն է առել, մենք ևս հարություն կառնենք մեռելներից և կփառավորվենք, երբ Քրիստոսը վերադառնա (տես Հռոմ. 8.11,17,29,30): Մեր մահկանացու մարմինները կվերափոխվեն՝ կերպարանակից լինելու Քրիստոսի փառավոր մարմնին, և այլևս ենթակա չեն լինի մեղքի, մահվան կամ ապականության (տես Ա Կորնթ. 15.53,54, Փիլիպ. 3.20,21, Ա Թեսաղ. 4.16,17): Մենք հավիտյան Տիրոջ հետ կլինենք Նոր երկնքում և Նոր երկրում, որտեղ կտիրի միայն արդարությունը (տես Հովհ. 14.2, Ա Թեսաղ. 4.17, Բ Պետր. 3.13, Հայտն. 21.1-4, 22-27):

Այդ դեպքում ինչպե՞ս պիտի ապրենք

Աստվածաշունչը կոչ է անում, որ ապրենք մեր կոչմանն արժանի կյանքով (տես Եփես. 4.1), աճենք Քրիստոսին կերպարանակից լինելու հարցում (տես Հռոմ. 8.29) և կատարենք այն բարի գործերը, որոնք Աստված պատրաստել է մեզ համար, որ անենք (տես Եփես. 2.10): Ի պատասխան Աստծո ողորմությանը՝ պետք է մեր կյանքերը ներկայացնենք որպես կենդանի պատարագ՝ սուրբ ու ընդունելի Նրա համար

(տե՛ս Հռոմ. 12.1,2): Հետևյալ գործնական ցուցումները վերցված են Աստվածաշնչից, որպեսզի օգնեն մեզ այս փառահեղ փնտրտուքի մեջ:

Սերտե՛ք Աստվածաշունչը

Մենք պետք է աճենք Աստծո ճանաչողության մեջ, այն բանի իմացության մեջ, թե ինչ է Նա արել մեզ համար Քրիստոսում, ինչպես նաև Նրա կամքի ճանաչողության մեջ մեր կյանքերի համար: Մենք պետք է զորանանք հավատքի մեջ, քաջալերվենք հնազանդությամբ և կերպարանակից դառնանք Աստծուն: Այս ամենը կարելի է անել միայն Աստվածաշունչն ընթերցելով, սերտելով, անգիր անելով և դրան հնազանդվելով: Աստվածաշունչը ներշնչված է Աստծո կողմից և օգտակար է վարդապետության, հանդիմանության, ուղղելու և արդարությամբ խրատելու համար (տե՛ս Բ Տիմոթ. 3.15-17): Այս պատճառով մենք պետք է ջանանք իմանալ դրանում գրված ճշմարտությունները և կիրառենք մեր կյանքերում (տե՛ս Բ Տիմոթ. 2.15): Հիսուսն ասաց. «Ոչ միայն հացով կապրի մարդ, այլ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից» (Մատթեոս 4.4):

Նվիրում աղոթքին

Աստված խոսում է մեզ հետ Աստվածաշնչի միջոցով, իսկ մենք կարող ենք խոսել Նրա հետ աղոթքի միջոցով: Մենք ինքներս ոչինչ անել չենք կարող (տե՛ս Հովհ. 15.4,5), սակայն կարող ենք պտղաբեր դառնալ՝ կառչելով Քրիստոսի զորությունից և մեր կարիքներն աղոթքի միջոցով Նրան հայտնելով (տե՛ս Հովհ. 15.7,8): Աստվածաշունչը լի է աղոթքի անհրաժեշտության, դրա օգուտների և բոլոր աղոթողներին խոստացված օրհնությունների մասին ուսմունքներով (տե՛ս Մատթ. 7.7-11,

Ղուկ. 11.1-13, Հակոբ. 4.2): Այս և այլ պատճառներով մենք պետք է նվիրվենք աղոթքին և թույլ չտանք, որ մեր սրտերը թուլանան (տե՛ս Ղուկ. 18.1, Կողոս. 4.2):

Աղոթքը հաղորդություն և զրույց է Աստծո հետ: Այն ներառում է երկրպագությունը կամ փառաբանությունը, Աստծո կամքը մեր կյանքերում, ընտանիքներում, եկեղեցիներում և աշխարհում կատարված լինելու խնդրանքը, նաև՝ որ Աստված լրացնի մեր կարիքներն Իր իմաստությամբ: Այն ներառում է նաև մեղքերի խոստովանությունը և հոգևոր զորություն խնդրելը, որպեսզի կարողանանք հաղթահարել դրանք: Աղոթել սովորելու ամենալավ միջոցը՝ Աստվածաշնչի աղոթքները սերտելն է: Աղոթքի ամենաօգտակար օրինակներից մեկը գրված է Մատթեոսի 6.9-13-ում:

Հրապարակային նույնացում Քրիստոսի հետ՝ մկրտությամբ

Փրկվում ենք միայն հավատքով, սակայն Քրիստոսը կարգադրում է՝ ովքեր հավատում են, հրապարակայնորեն նույնանան Իր և Իր ժողովրդի հետ՝ մկրտության միջոցով (տե՛ս Մատթ. 28.18-20, Գործք 8.36,37):

Անդամակցություն աստվածաշնչյան եկեղեցուն

Աստծո կամքն է, որ բոլոր ճշմարիտ հավատացյալները միանան համախոհ հավատացյալների համայնքի (տե՛ս Եբր. 10.23-25): Ստորև ներկայացված են աստվածաշնչյան եկեղեցուն բնութագրող որոշ հատկանիշներ.

- համոզմունք, որ Աստվածաշունչն անսխալական է և բավարար.
- աստվածաշնչյան ճշմարտության գնահատանք և այն քարոզելու ու սովորեցնելու խանդավառություն.

- հավատարմություն՝ ուղղափառ, Երրորդության քրիստոնեությանը, ինչպես գրված է Ռեֆորմացիայից բխող՝ հավատքի դասական դավանություններում.
- Աստծո վեհության ընկալում և մարդու մեղսալիության ու կարիքի ընդունում.
- համոզմունք, որ Քրիստոսն ու Իր Ավետարանը քրիստոնեական հավատքի մեջ առանցքային են և առաջնակարգ.
- փոխակերպման աստվածաշնչյան ընկալում, որը տանում է ապաշխարության, հավատքի և սրբության.
- նվիրում աստվածաշնչյան երկրպագությանը Աստծո երկյուղով՝ ի հակադրություն զվարճալի կամ հուզական երկրպագությանը.
- առաջնորդների խմբի առկայություն՝ բաղկացած սուրբ, խոնարհ, սովորեցնելու ունակ մարդկանցից, ովքեր կյանքերը դրել են իրենց հոգածության ներքո գտնվող հավատացյալների համար և հովվական խնամք են տանում նրանց մասին.
- նվիրում աստվածաշնչյան խորհրդատվությանը և եկեղեցական կարգապահությանը.
- իրական ձգտում քրիստոսանմանությանը, սրբությանը և սիրուն՝ խոնարհաբար կոտրվելով սեփական թերությունների ոլորտում և հրաժարվելով ավելի վեր դասվել, քան այլ առողջ ու հավատարիմ եկեղեցիները.
- իրական և նկատելի նվիրում ավետարանչությանը և միսիային.
- կախվածություն Աստծուց, որն արտահայտվում է ջերմեռանդ աղոթքների պարբերական հավաքույթներով.

Շարունակական սրբացում

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ սրբացումը (մեր անձնական աճը սրբության կամ քրիստոսանմանության մեջ) Աստծո կամքն է (տե՛ս Ա Թեսաղ. 4.3, Եբր. 12.14, Ա Պետր. 1.14-16): Սա պետք է դառնա մեր կյանքի իրականությունը, մենք պետք է ձգտենք Աստծուն՝ ընթերցելով Աստվածաշունչը, աղոթելով, աստվածահաճո հավատացյալների հետ ընկերակցելով և այս աշխարհի մեղսալի բաներից հեռու մնալով, որպեսզի դրանք չվարակեն մեզ (տե՛ս Բ Կորնթ. 6.14-7.1):

Ծառայություն տեղի եկեղեցում

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ ամեն հավատացյալ թագավորական քահանայության մաս է (տե՛ս Ա Պետր. 2.9): Յուրաքանչյուրիս տրված են հոգևոր պարգևներ (կարողություններ), որոնք պետք է օգտագործվեն տեղի եկեղեցու շինության համար (տե՛ս Հռոմ. 12.4-8, Ա Կորնթ. 12.4-7): Մենք չպետք է պարզապես միանանք տեղի եկեղեցուն, այլ՝ մեր կարողություններով ծառայենք եկեղեցում: Եկեղեցում ծառայելը միայն հովիվների և ավագների գործը չէ: Հովիվները պետք է պատրաստեն եկեղեցու բոլոր անդամներին ծառայության աշխատանքի համար (տե՛ս Եփես. 4.11,12):

Ծառայություն ավետարանչության և միսիայի ոլորտում

Աստծո կամքն է, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանը քարոզվի բոլոր ազգություններին և երկրի վրա գտնվող ամեն մարդու (տե՛ս Մարկ. 16.15, Ղուկ. 24.47): Քրիստոսի պատվիրանը կոչվեց Մեծ հանձնարարական (տե՛ս Մատթ. 28.18-20), և ամեն քրիստոնյա պետք է իր պարգևներով նվիրված լինի այդ առաջադրանքը կատարելուն: Սա ներառում է նաև

հավատքի պատճառով հալածված քրիստոնյաների մասին հոգ տանելուն, կարիքավորներին օգնելուն և բարեգործություններ անելուն նրանց համար, ովքեր չեն հավատում (տե՛ս Մատթ. 25.31-46, Գաղատ. 6.10, Եբր. 13.3,16, Հակոբ. 1.27):

Մեր հույսն ու աղոթքը ձեզ համար

«Եվ Ինքը՝ խաղաղության Աստվածը, ձեզ սուրբ անի բոլորովին: Եվ ձեր ամբողջ հոգին և շունչը և մարմինը անարատ պահվի՝ մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալը»:

- Ա Թեսաղոնիկեցիների 5.23

Փոլ Վոշերը ընթերցողին է ներկայացնում Հիսուսի մասին բարի լուրի աստվածաշնչյան ամփոփ նկարագիրը: Հաջորդաբար Աստվածաշնչից հատվածներ մեջբերելով՝ Վոշերը բնութագրում է Աստծո սուրբ բնավորությունը, մարդու խնդիրը մեղքի նկատմամբ և Հիսուսի փրկագնող կյանքով, մահվամբ և հարությամբ տրված աստվածային լուծումը՝ նրանց համար, ովքեր ապաշխարում են և հավատում: Եթե ձեզ հետաքրքրում են Ավետարանի հիմնական պնդումները, կամ եթե գիտեք ինչ-որ մեկին, ով Քրիստոսի մասին ճշմարտությունները բացահայտելու փուլում է, ապա այս հակիրճ ներկայացումն այն ամենամեծ լուրի, որի կարիքը աշխարհը երբևէ ունեցել է, հենց այն է, ինչ անհրաժեշտ է ձեզ:

«Չկա ավելի գեղեցիկ բան, քան Ավետարանն է՝ բարի լուրն այն մասին, որ Աստված Հիսուս Քրիստոսի միջոցով փրկում է մեղավորներին: Եվ չկա ավելի պախարակելի բան, քան կեղծ ավետարանն է: Շարունակաբար անդրադառնալով Աստծո Խոսքին՝ Փոլ Վոշերը քայլ առ քայլ առաջնորդում է մեզ իմանալու ճշմարտությունն այն մասին, թե ով է Աստված, ով ենք մենք, և ինչպես կարող ենք ապրել Աստծո հետ այժմ և հավիտյան: Այս գրքույկը դեղորայք է մեղավորի համար, և կերակուր՝ սուրբի համար»:

Դր. Ջոուլ Ռ. Բրիք, նախագահ, պուրիտանական ռեֆորմատիվ աստվածաբանական սեմինարիա, Գրենդ Ռեփիդս, Միչիգան

ՓՈԼ ՎՈՇԵՐԸ տասը տարի ծառայել է Պերուի Հանրապետությունում՝ որպես միսիոներ: Այդ ընթացքում հիմնադրել է «HeartCry» Միսիոներական համայնքը՝ միտված օժանդակելու պերուացիներին, ովքեր եկեղեցիներ են հիմնում: Այժմ Փոլը «HeartCry» Միսիոներական համայնքի (heartcrymissionary.com) ծառայողներից է: Նա և կինը՝ Չարոն, ունեն չորս զավակ՝ Յանը, Էվանը, Ռոուենը և Բրոնվինը: